ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*«Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված Երևան քաղաքի Բաղրամյան 40 հասցեին հարող տարածքում նախատեսվող բարեկարգման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսումների /2-րդ լսում/*

13.01.2026թ.

ք. Երևան
Արաբկիր վարչական շրջան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ Օրենք, 03.05.2023թ. ՀՕ-150-Ն) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով 2026թ. հունվարի 13-ին ժամը 11:00-ին, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված Երևան քաղաքի Բաղրամյան 40 հասցեին հարող տարածքում նախատեսվող բարեկարգման և կանաչապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսումը (2-րդ լսում):

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հասանելի է եղել հանրության համար, ինչպես նաև տեղադրված է եղել Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում, իսկ շահագրգիռ հանրությունը հնարավորություն է ունեցել մինչ հանրային լսումն իր առաջարկությունները, դիտողություններն ու կարծիքները գրավոր ուղարկել նաև Երևանի համայնքապետարան, ինչպես նաև նախօրոք գրանցվել հանրային քննակումներին մասնակցելու համար:

Հանրային քննարկմանը ներկա էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Արմինե Վարդանյանը, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Սուրեն Վարոսյանը, Երևանի քաղաքապետարանի մասնագետ Էլլադա Արամյանը, «Հայաստանի ամերիկյան համալսարան»-ի ներկայացուցիչներ Էմմա Աhարոնյանը, Հասմիկ Հովհաննիսյանը, ՇՄԱԳ իրականացնող մասնագետ Արամ Գալոյանը:

Հանրային լսման պատասխանատու «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Արմինե Վարդանյանը հանդես եկավ բացման խոսքով, ողջունեց հանդիպման մասնակիցներին, ներկայացրեց հանդիպման հիմնական նպատակը և փորձաքննական գործընթացի շրջանակներում կատարված աշխատանքները:

Նա նշեց, որ ՀՀ օրենսդրության համաձայն նախատեսվող գործունեությունը դասակարգվում է Բ կատեգորիայի: Փորձաքննության իրականացման համար օրենքով սահմանված է 40 աշխատանքային օր: ՇՄԱԳ հաշվետվությունն օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններ կարծիքներ ստանալու համար:

Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա այն ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման: Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակվել են հանրային լսումներ: Նա ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, թե ՇՄԱԳ հաշվետվությամբ ինչ է նախատեսվում իրականացնել, նշեց, որ 1-ին հանրային լսման արդյունքում համայնքի

ավագանին տվել է իր նախնական համաձայնությունը և այսօր արդեն անցկացվում է 2-րդ հանրային լսումը:

Վարդանյանը ներկայացրեց, որ Օրենքի 17-րդ հոդվածի 16-րդ կետի համաձայն Փորձաքննության գործընթացի լիարժեքությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով փորձաքննական գործընթացի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 աշխատանքային օրով, Օրենքի 29-րդ հոդված 4-րդ մասի 3)-րդ կետի ծանուցումից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում շահագրգիռ հանրության հնարավոր գրավոր կամ էլեկտրոնային առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները ներկայացնելու նպատակով:

ՇՄԱԳ-ի լրամշակման ժամանակ փորձաքննական կենտրոնի մասնագետի կողմից ներկայացվել է դիտողություն տարածքում ավտոկայանատեղիներ նախատեսված չլինելու վերաբերյալ: Ինչի արդյունքում նախաձեռնողի կողմից իրականացվել է փոփոխություն բացի այն, որ Համալսարանի գլխավոր մասնաշենքի բակային հատվածում առկա է 15 իսկ Փարամազ Ավետիսյան մասնաշենքի ավտոտնակում 14 մեքենայի կայանատեղի, համալսարանը վարձակալել է հողատարածք Մոսե 13 հասցեում, որտեղ ներկա պահին ընթանում եմ ավտոկայանատեղիի կահավորման աշխատանքները: Տարածքը նախատեսված է 43 ավտոմեքենայի կայանման համար:

Այնուհետև Արմինե Վարդանյանը ներկայացրեց շրջակա միջավայրի վրա ազդեցությունները մեղմող միջոցառումները, որոնք ներառված են ՇՄԱԳ հաշվետվությունում, որոնք կառուցապատողը պետք է խստիվ պահպանի և իրականացնի կառուցապատման աշխատանքների ընթացքում:

«Հայաստանի ամերիկյան համալսարան»-ի ներկայացուցիչների և ներկաների հետ ծավալվեց ընդհանուր քննարկում նախագծի շուրջ:

Համայնքի ներկայացուցիչը, վարչական շրջանի ղեկավարը ողջունեցին նախատեսվող գործունեության իրականացումը: Գործունեության վերաբերյալ այլ առաջարկներ և դիտողություններ չներկայացվեցին:

Մասնակիցների ցանկը և հանրային լսման նկարները ներկայացվում են սույն արձանագրությանը կից:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Արմինե Վարդանյան

«Հայաստանի ամերիկյան համալսարան» Լիազորված
ներկայացուցիչ